## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 , arjut.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N ԳԱ90
*02 նոյեմբեր 2017թ.*

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու թիվ 22-Ա և 23-Ա որոշումները:

03.11.2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ.* ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

27.10.2017թ. թիվ 22-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն «Կազա» շվեցարական բարեգործական հիմնադրամի կողմից տրված դրամաշնորհով ձեռք բերված Արջուտ համայնքի 06-019-063-002 ծածկագրի, 31 փողոցի թիվ 6 հասցեի անասնագոմը և 0,4812 հա /06-019-107-082 ծածկագրից/ վարելահողը, ինչպես նաև «Ջոնդեր» մակնիշի հավաքող հակավորող սարքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրատվությամբ հատկացնել «Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին:
2. Արջուտ համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել նվիրատվության պայմանագրի կնքումը «Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի հետ:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արջուտ համայնքի ղեկավար Վ. Ծ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

27.10.2017թ. թիվ 23-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով`

Արջուտ համայնքի ավագանին որոշում է`

1. Տալ համաձայնություն Արջուտ համայնքի սեփականություն հանդիսացող գրքային ֆոնդն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերելու Արջուտի միջնակարգ դպրոցին և պայմանագրով սահմանել, որ գույքը նվիրաբերվում է դպրոցին` համայնքի բնակչությանը անվճար սպասարկելու պայմանով:
2. Արջուտ համայնքի ղեկավարին` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գրքային ֆոնդի նվիրաբերության պայմանագրի կնքումը Արջուտի միջնակարգ դպրոցի հետ:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Արջուտ համայնքի ղեկավար` Վ.Ճ.Մկրտչյան